

**Վարդուհի Արտաշեսի Բարսեղյան**

ասպիրանտ

ԵՊՀ, հայ բանասիրության ֆակուլտետ

[varduhi.barseghyan@ysu.am](mailto:varduhi.barseghyan@ysu.am)

**Անփոփագիր**

Միջնադարյան իրավական գրականությունը ոչ միայն արտացոլում է ժամանակի իրավական մտածողությունը, այլև նշանակալի դեր է ունեցել այն եզրույթների ձևավորման գործում, որոնք շարունակվում են կիրառվել արդի իրավական լեզվում: Այն նաև աղբյուր է իրավական գիտակցության, սոցիալական կարգավորման մեխանիզմների և լեզվամշակութային ժառանգության ուսումնասիրության համար, ուստի այսօր դիտարկվում է ոչ միայն իրավաբանական, այլև լեզվաբանական ու պատմամշակութային հետազոտությունների շրջանակներում: Այդ առումով Վաչագան Բարեպաշտի «Սահմանադրութիւն կանոնական» իրավական փաստաթուղթը արժեքավոր վկայություն է միջնադարյան հայկական իրավագիտության լեզվական համակարգվածության և մասնագիտական ձևակերպումների կայացման մասին: Այս փաստաթուղթը դարաշրջանի իրավական կարգավորումների և եկեղեցական-հասարակական հարաբերությունների արտացոլումն է, որտեղ կիրառված եզրույթները և կառուցվածքային մոտեցումները վկայում են իրավական լեզվի ներքին համակարգի կայացման կարևոր գործընթացների մասին: Կանոններում կիրառված եզրույթները՝ իրենց բովանդակային ճշգրտությամբ, իմաստային խորությամբ և լեզվական ամբողջականությամբ, ոչ միայն պատմական հետաքրքրություն են ներկայացնում, այլև կարող են դիտարկվել որպես հենակետեր արդի արևելահայերենի մասնագիտական լեզվի, մասնավորապես՝ իրավաբանական տերմինաբանության զարգացման գործընթացում: Կանոնների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջնադարյան իրավաբանական գրականությունը պարունակում է լեցուն և համակարգված եզրաբանական շերտ, որի վերափմաստավորումն ու ձևափոխումը կարող են նպաստել արդի իրավաբանական լեզվի կատարելագործմանը՝ առանց օտարաբանությունների գերակշռության:

**Հիմնաբառեր.** Վաչագան Բարեպաշտ, գրաբար, իրավաբանական եզրույթներ, սահմանադրություն, կանոններ, իմաստաբանություն:

**Ներածություն**

Հայ իրավագիտության պատմության մեջ վաղ կանոնագրություններից է Վաչագան Բարեպաշտ արքայի ստեղծած «Սահմանադրութիւն կանոնական»-ը, որը եպիսկոպոսների, քահանաների և ազատների համաձայնությամբ ընդունվել է V դարի վերջին կամ VI դարի սկզբին Պարտավից արևմուտք ընկած թագավորական ամառանոց Աղվենում գումարված կանոնադիր ժողովում: Ժողովն իր բնույթով աշխարհիկ-եկեղեցական էր. մասնակցել են 18 հոգևորականներ, ինչպես նաև Արցախի և Ուտիքի

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ավագանին, իշխաններ, ազատները: Ժողովն ընդունել է 21 կանոն, որոնք հայտնի են որպես Վաչագան Աղվանից «արքայի կանոնախումբ» կամ «Սահմանադրութիւն կանոնական Վաչագան Աղուանից արքայի»:

Հայտնի է, որ մինչ Վաչագան Բարեպաշտի կանոնների ընդունումը՝ Աշտիշատում և Շահապիվանում հայ Արշակունի թագավորների օրոք՝ IV դարում արդեն ձևակերպվել էին օրենսդրական որոշ դրույթներ, որոնք կարգավորում էին հոգևոր, քաղաքական և տնտեսական կյանքը: Ըստ բանասեր և պատմաբան Ներսես Ալիկյանի՝ Աղվանի ժողովը գումարվել է Շահապիվանի ժողովից ոչ շատ ուշ: Կանոններում մի քանի ազամ հիշատակվում է մի այլ Կանոնագիրք («որպես ի Կանոնսն գրեալ է՝ պատուհաս դիցեն», «կանոնիք դատեսցին», «որ ի կանոնս գրեալ է»), համաձայն որի առաջնորդվում են Աղվանի ժողովում [Ալիկյան, 139]: Վաչագան արքայի կանոնները չափազանց մերձ են նաև Աշտիշատի եկեղեցական ժողովի սահմանումներին: Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սմբատ Հովհաննիսյանը գրում է, որ Աղվենի սահմանադիր ժողովի որոշումների հիմքում դրվել են Աշտիշատի ժողովի կանոնները և Ներսես Մեծի միջոցառումները՝ հաշվի առնելով Աղվանքի աշխարհիկ և հոգևոր դասերի ուժերի նոր հարաբերակցությունը և տեղական առանձնահատկությունները [Հովհաննիսյան, 274]: Ահա, հենց այդ պայմաններում առաջացել էր նոր անհրաժեշտություն՝ ստեղծել օրենքների մի հավաքածու, ինչպես ասված է ընդունված կանոնների առաջաբանում [Կանոնագիրք հայոց, 91]՝ աշխարհականների և հոգևորականների, ազատների և շինականների միջև բազմաթիվ հակառակությունները իրավական միջոցներով հարթելու համար: Ընդունված կանոններից պարզ է դառնում, որ մինչ այդ ազատներն իրենց դաստակերտներից վտարում էին երեցներին, նոր երեցներ կարգում, եկեղեցիներում սեղան դնում, պատարագ մատուցում առանց եպիսկոպոսի հետ համաձայնեցնելու (կանոն Ի, ԻԱ), կիրակի օրերին իրենց ծառաների հետ եկեղեցի չէին գնում (կանոն ԺԹ), հանգուցյալի հոգեբաժինը չէին հանձնում եկեղեցուն (կանոն Գ) և այլն: Ժողովում աշխարհականների համար սահմանվել են հոգևոր բնույթի մի շարք պարտավորիչ կանոններ. արգելվում էր տղամարդու քմահաճ ամուսնալուծությունը, մերձամուսնությունը, վիուկներին ու կախարդներին դիմելը, հոգևորականների վատ վարքը՝ սովորական գայթանքից մինչև գողություն ու անբարոյականություն: Թագավորին էր վերապահվում օրենքների սահմանումը և երկրի ներսում բոլոր ազատներն ու արքայազունները, հոգևորականներն ու աշխարհականները պարտավոր էին խոնարհաբար ենթարկվել արքունիքի ընդունած ամեն մի վճռին:

Կանոնների լեզուն արտացոլում է վաղ միջնադարյան իրավական խոսքի ձևավորման նախնական փուլը՝ գրաբարին բնորոշ լեզվաձևական խտությամբ, կրոնաբարոյական ազդակներով և իրավաբանական հասկացությունների գործնական և կիրառական ձևակերպումներով՝ հստակ նշելով՝ ինչն է արգելված, ով է պատասխանատու, և ինչ հետևանք կլինի: Կանոնները աչքի են ընկնում հակիրճությամբ և հոգևոր աշխարհայացքի վրա հիմնված եզրույթաբանությամբ, ինչը վկայում է այն մասին, որ իրավաբանական լեզուն այդ փուլում հիմնված էր բարոյական կարգերի լեզվական արտահայտման վրա: «Սահմանադրութիւն կանոնական»-ից առանձնացրել և քննության նյութ ենք դարձրել 34 եզրաբառեր, որոնց կանդրադառնանք ստորև՝ դրանք քննելով ըստ Մ. Ավգերյանի, Գ. Ավետիքյանի, Խ. Մուրմելյանի աշխատասիրությամբ

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

կազմված «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Ստեփան Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարան», Էդուարդ Աղայանի «Արդի հայերէնի բացատրական բառարան» բառարանների:

Բառերի քննությունը սկսենք հենց **\*սահմանադրութիւն** բառից, որը ՆՀԲ-ում բացատրվում է «կարգաւորութիւն, որոշումն սահմանաց, և տեսչութիւն վերին, օրինագրութիւն, վճիռ» [Աւետիքեան և այլք, հ. 2, 688]: Ստ. Մալխասայանցը տալիս է բառի մի քանի իմաստները՝ 1. սահմաններ դնելը, 2. սահմանված կարգ, 3. հիմնական օրենք, որ սահմանված է մի երկրի լիազոր ներկայացուցիչների կողմից և որով կառավարվում է այդ երկիրը [Մալխասայանց, հ. 4, 175]: Է. Աղայանի բառարանում բառի առաջին իմաստն է՝ պետության հիմնական օրենքը, որ սահմանում է նրա հասարակական ու պետական կառուցվածքը, ընտրական սիստեմը, պետական մարմինների կազմակերպման ու գործունեության սկզբունքները, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները [Աղայան, հ. 2, 1271]: Մեր համոզմամբ՝ **\*սահմանադրություն** բառն այժմ առաջին հերթին ընկալվում է հենց այս իմաստով՝ կոնստիտուցիա՝ դառնալով պետության հիմնական օրենքի անվանումը:

**\*Կանոնական** - կանոնաւոր, օրինադրեալ, կանոնվնական տառք, հրամանք, սահմանադրութիւն, կարգադրութիւն, նզովք, բան» [Աւետիքեան և այլք, հ. 1, 1051]: Ստ. Մալխասայանցը բառը բացատրում է դրա կրոնական բովանդակությամբ՝ «1. եկեղեցական կանոնի համաձայն եղած, կանոնով սահմանված, կանոնական հրաման՝ վճիռ, 2. եկեղեցական ժողովով իբրև վավերական ճանաչված» [Մալխասայանց, հ. 2, 385]: Է. Աղայանի բառարանում բառը բազմիմաստ է: Մեր ուսումնասիրության առարկայի շրջանակներում բառի հիմնական իմաստներն են՝ կանոնով նախատեսված՝ սահմանված, կանոն համարվող [Աղայան, հ. 1, 689]:

**\*Հակառակութիւն** - «հակառակելն, հակառակ կալն, ընդդիմամարտութիւն, վեճ» [Աւետիքեան և այլք, հ. 2, 8]: Արդի արևելահայերէնում ակնհայտ է բառիմաստի ընդլայնումը, քանզի բառն արդի արևելահայերէնում ոչ միայն նշանակում է հակառակ՝ դէմ լինելը, այլև հակառակորդ՝ ընդդիմադիր լինելը, թշնամութիւն, գժտութիւն, կռիւ, առարկութիւն, ընդդիմախօսութիւն [Մալխասայանց, հ. 3., 16]: Էդ. Աղայանը բառի համար բերում է նաև «ձախորդություն» իմաստը [Աղայան, հ. 1, էջ 794]: Մեր դիտարկմամբ «հակառակություն» բառը արդի արևելահայերէնում ավելի կիրառական է «հակառակ լինելու» և «ձախորդություն» իմաստներով:

Գրաբարի մատենագրության մեջ լայնորեն կիրառվող **\*ատեան** բառը նշանակում է «տեղի կամ ժողովարան դատաստանի, հրապարակ, դատաստան, և նոյն ինքն ժողովն դատողաց, բազմութիւն ժողովելոց» [Աւետիքեան և այլք, հ. 1, 334]: Արդի արևելահայերէնում բառը պահպանել է իր գրաբարյան իմաստը՝ նշանակելով «տեղ, շինութիւն, հրապարակ, որտեղ ժողովվում են պաշտօնատար անձեր՝ միասին մի գործ քննելու և վճռելու», «նիստը, որ տեղի է ունենում ատեանում», «հիմնարկ, որի պաշտօնեաներին յանձնվում է խորհրդակցութեամբ վարել որոշ կարգի գործեր. զինուորական, դատական, վարչական»: **\*Ատեան** բառը տեղի իմաստով արտահայտում է նաև «եկեղեցու բեմից ներքև մասը, որտեղ կանգնում է հոգևորական դասը» [Մալխասայանց, հ. 1, 249]: Էդ. Աղայանի բառարանում «ատյան» բառի «ժողովրդատեղի, դահլիճ, հրապարակ» իմաստները ներկայացվում են իբրև պատմաբառեր [Աղայան, հ. 1,

123]: Արդի արևելահայերենում իրավագիտության մեջ լայնորեն կիրառվում է «դատական ատյան» արտահայտությունը, որը նշանակում է որևէ աստիճան տվյալ դատական համակարգում:

**\*Անօրէն** (պահավերեն \*awδēn ձևից առաջացած \*օրէն արմատից) - «որ չունի կամ չպահէ զօրէնս, որ ոք և որ ինչ է արտաքոյ կամ ընդդէմ օրինաց, անձն կամ գործ անիրաւ, ամպարիշտ, ժանտ, ոչ օրինաւոր, անկարգ» [Աւետիքեան և այլք, հ. 1, 257]: Բառը և՛ գրաբարում, և՛ արդի արևելահայերենում բազմիմաստ է: Կարող է վերագրվել ոչ միայն իրավաբանական, այլ նաև բարոյական ու սոցիալական խախտումներին: Ստ. Մալխասյանցը առաջին հերթին տալիս է բառի կրոնական բնույթով պայմանավորված իմաստները՝ որպէս ածական՝ օրէնք, հավատ չունեցող, իսկ որպէս գոյական՝ հատկապէս քրիստոնէական կրոն չունեցող, այլահավատ, մասնավորապէս մահմեդական: Իրավաբանության մեջ բառն իբրև ածական նշանակում է «օրէնքի դէմ, օրէնքը զեղծանող» [Մալխասյանց, հ. 1, 191]: Սույն կանոններում բառը գործածվել է իբրև գոյական՝ «*և որ անօրէն և մարդասպան է...*»: Էդ. Աղայանը «մահմեդական» իմաստը համարում է հնացած [Աղայան, հ. 1, 87]:

**\*Մարդասպան** - «սպանօղ մարդոյ, մարդադաւ, արինահեղ» [Աւետիքեան և այլք, հ. 2, 222]: Ստ. Մալխասյանցի բառարանում տրված են բառի ավելի լայն, իրավաբանական իմաստները՝ «մարդ սպանող, նա ով ինքնագլուխ կերպով առանց իրավունքի մարդ է սպանել նախամտածված կերպով, դաւաճանօրէն, թշնամաբար, կամ պատահաբար առանց դիտաւորութեան» [Մալխասյանց, հ. 3, 276]:

**\*Կարգ** - «շարադասութիւն, դասավորութիւն օրինօք» [Աւետիքեան և այլք, հ. 1, 1065]: Բառի ծագումը, ըստ Գ. Ջահուկյանի, դեռևս անհայտ է: Վաչագան Բարեպաշտի կանոններում հանդիպում է նաև **\*կարգել** բառը՝ «կարգեցաք (կանոնները) այսպէս» օրինակում: Բառը տարբեր կիրառություններում կարող է նշանակել սահմանել, օրինադրել, որոշել: Սույն կանոններում, գտնում ենք, որ բառը կիրառվում է հենց «սահմանել» իմաստով: Արդի արևելահայերենում բառը բազմիմաստ է: Նշանակում է «1. որևէ պաշտոնի՝ աշխատանքի նշանակել, որևէ գործի դնել, 2. որոշել, սահմանել»: Եկեղեցական եզրույթաբանության մեջ այն նշանակում է նաև «ձեռնադրել, եկեղեցական աստիճան շնորհել» [Աղայան, հ. 1, 704]: Ստ. Մալխասյանցի բառարանում **\*կարգել** բառի առաջին իմաստը հենց «կարգ, օրէնք դնել, սահմանել, որոշել»-ն է [Մալխասյանց, հ. 2, 403]:

**\*Վկայել** - «վկայ լինել, վկայութիւն դնել կամ տալ, հաստատել զճշմարտութիւն» [Աւետիքեան և այլք, հ. 2, 826]: Արդի արևելահայերենում հիմնականում կիրառել է հետևյալ իմաստներով՝ «իբրև վկա ցուցմունք տալ», «խօսքով կամ գործով հաստատել մի բանի ճշմարտութիւնը կամ իրականութիւնը» [Մալխասյանց, հ. 4, 347]:

Ինչպէս սույն կանոններում, այնպէս էլ գրաբարյան մի շարք բնագրերում հանդիպում է **\*մատանել** բայը, որը նշանակում է՝ մատանեալ կնքել, դրոշմել [Աւետիքեան և այլք, հ. 2, 213]: Բայը ծագում է *մատանի* բառից և ունի սերտ կապ իրավական գործողությունների ձևականացման ավանդույթների հետ: Բառը գործածվել է որպէս իրավագոր կամ իշխանական փաստաթղթերը վավերացնող արարողակարգի մասնիկ՝ հաճախ արտահայտելով գործողության իրավագորությունը: Է. Աղայանի բառարանում **\*մատանել** բայը բացակայում է, փոխարենը առկա է **\*մատնեհարել** բառը, որ նշանակում

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

է մատանիով կնքել, դրոշմել: Ժամանակակից արդի արևելահայերենում բառը գործածությունից դուրս է եկել, բառի համարժեքները կարող են լինել՝ *դրոշմել, կնքել, ստորագրել*, իսկ նեղ իրավական տիրույթում՝ *վավերացնել*: Սակայն գրաբարում **\*մատանելը** միաժամանակ մարմնավորում է մատանու միջոցով իշխանական կամ հոգևոր լիազորություն փոխանցելու խորհրդանշական գործողությունը, որն արդի լեզվում հնարավոր չէ ամբողջապես վերարտադրել մեկ եզրույթով:

**\*Հրաման** բառը, որ եզրույթային արժեք ունի թե՛ կրոնական, թե՛ հասարակական-իրավական իմաստային դաշտերում, գրաբարում նշանակում է *պատվեր, վճիռ*: Կանոններում հանդիպում է նաև **\*հրամայել** բառը, որը իրավական իմաստային դաշտում քննարկելիս գրաբարում նշանակել է *կարգել, սահմանել* [Աւետիքեան և այլք, հ. 2, 132]: Արդի արևելահայերենում բառն առավելապես կիրառվում է կարգադրել, պարտադրել, պատվեր տալ իմաստներով [Սուքիասյան, 663]:

Իրավաբանական եզրույթների շարքում հետաքրքրական է **\*խոստակ** բառը, որը գրաբարում բացի «մանուկ, զուակ» իմաստներից ունի նաև «ժառանգ» իմաստը: Է. Աղայանի բառարանում այն բացակայում է: Ստ. Մալխասյանցը բառը բացատրում է «օգտվելու համար մեկին տրված հող, պայմանական ժառանգական հողատիրութիւն, աւատ, ֆէոդ» [Մալխասյանց, հ. 2, 286]: Թեև ՆՀԲ-ն չի տալիս բառի այդ իմաստները, այնուամենայնիվ, հայտնի է, որ բառը նկարագրել է ֆեոդալական պայմանական հողատիրության ձևը՝ հատկապես տարածված պարթև Արշակունիների, Մասանյանների պետությունում և միջնադարյան Հայաստանում: *Խոստակ* ստացողը կոչվել է *խոստակդար*: Բառն արդի արևելահայերենում կիրառական չէ:

**\*Դատել** - «դատ կամ դատաստան առնել, որոշել և վճռել յատենի, պատժել կամ վարձատրել, արժան համարել» [Աւետիքեան և այլք, հ. 1, 602]: Ինչպես գրաբարում, այնպես էլ արդի արևելահայերենում, բառը բազմիմաստ է. որպես իրավական բառ՝ նշանակում է դատական նիստում մեկի գործը քննել, ցուցմունք տալ, վճիռ կայացնել, դատապարտել: Բառը ձեռք է բերել նաև այլ իմաստներ, ինչպես՝ 1. դատապարտել, 2. դատը վարել, 3. մարզական խաղը կամ մրցումը վարել, 4. գնահատել, որոշել, 5. դատողություն անել, 6. կարծիք կազմել, 7. ձեռք բերել [Աղայան, հ. 1, 281]:

**\*Երդումն** - 1. երդում, երդում տալը, 2. նգովք, որ մարդ իր վրա դնում է, եթե ստի [Աւետիքեան և այլք, հ. 1, 674]: Արդի արևելահայերենում բառը բացի *ուխտ* ընդհանուր իմաստից, ստացել է նաև իրավական իմաստ՝ նշանակելով «հանդիսաւոր յանձնառութիւն մի պարտականութեան կամ վկայութիւն մի բանի մասին՝ վկայ կանչելով» [Մալխասյանց, հ. 1, 576], «բանաձև, որ արտասանում են երդվելիս» [Աղայան, հ. 1, 339]:

**\*Անէծք** - միջնադարում սաստկագույն պատիժներից էր, որ նշանակում է «չարիս մաղթելն, չարաբանութիւն առ ի վնաս և ի պատիժ» [Աւետիքեան և այլք, հ. 1, 147]: Արդի արևելահայերենում պահպանվել է բառի սկզբնական իմաստը: Իրավունքի բառապաշարի առանցքային բառերից է **\*մեղքը**: Բառարաններում այն բացատրվում է «յանցանք, անիրաւութիւն, ապիրատութիւն» իմաստներով: Արդի արևելահայերենում այն պահպանել է իր գրաբարյան իմաստը:

**\*Սուտ** - ոչ ճշմարիտ, անիրաւ, խարդախ, կեղծ, անհավատարիմ, սնտոի [Աւետիքեան և այլք, հ. 2, էջ 732]: Արդի արևելահայերենում բառը պահպանել է իր

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

բազմիմաստությունը և սկզբնական իմաստը՝ նշանակելով «1. ճշմարտության հակառակ, 2. իրականության հակառակ, 3. ոչ ուղիղ, 4. խաբեբայ, 5. կեղծ, 6. արհեստական, 7. ոչ ուղիղ, 8. անհիմն, 9. սուտխոս, 10. ոչ ճշմարտությամբ, 11. ինչ որ հակառակ է ճշմարտության, 12. սուտ խոսք» [Մալխասյանց, հ. 4, 249]: **\*Ճշմարտութիւն** բառը գրաբարում ունեցել է խիստ արտահայտված իրավական երանգ՝ նշանակելով նաև «իրաւունք, արդարութիւն, կանոն ճշմարտութեան» [Աւետիքեան և այլք, հ. 2, 184]: Բառը արդի արևելահայերենում բազմիմաստ է: Նշանակում է «1. ճշմարիտ լինելը, 2. խօսքի համապատասխանութիւնը իրականության, 3. ինչ որ իրոք կայ, 4. ուղիղ՝ ճշմարիտ իր՝ սկզբունք, 5. անկեղծութիւն, հաւատարմութիւն, 6. արդարութիւն, 7. իրականութեան ճշմարիտ ըմբռնումը» [Մալխասյանց, հ. 3, 220]:

**\*Պայման** - «ուխտ, դաշն, խոստումն, կարգ, օրէնք, կանոն և եղանակ և չափ իրաց և բանից, հանգամանք» [Աւետիքեան և այլք, հ. 2, 594]: Արդի արևելահայերենում բառի իմաստը նեղացել է, այն ձեռք է բերել առավել մասնագիտական և գործնական բնույթ՝ նշանակելով 1. երկու կամ ավելի կողմերի միջև որևէ բանի մասին համաձայնություն, 2. պայմանագրի՝ համաձայնության կետ՝ հողված, որով այս կամ այն պարտավորությունն է դրվում պայմանավորվող կողմերի վրա, 3. պահանջ կամ առաջարկ, որ անում է կողմերից մեկը որևէ կարգի համաձայնության համար, 4. որևէ բանի համար անհրաժեշտ հիմք, 5. որևէ բանի համար առկա հնարավորությունների ամբողջությունը [Աղայան, հ. 2, 1177]:

**\*Պայմանել** բայը գրաբարում ունեցել է «պայման առնել, պայման դնել, ուխտել» իմաստները [Աւետիքեան և այլք, հ. 2, 595]: Արդի արևելահայերենում *պայմանել* բառի վերաբերյալ թեև բառարաններում այն բացատրվում է իր գրաբարյան իմաստներով, այնուամենայնիվ, կարող ենք ասել, որը բառն արդի արևելահայերենում չի կիրառվում: Կանոններում հանդիպում է նաև **\*տուգանք** եզրույթը, որն արդի արևելահայերենում պահպանել է իր գրաբարյան՝ «տուժանք, տոյժ, տոյժք» իմաստները:

**\*Խոստովանել** - «խոստանալ կամ խօսք տալ»: Գրաբարում բառն օգտագործվել է նաև «հաստատել, ընդունել», «պատմել զմեղս անձին բեկեալ սրտիւ, կատարել զխորհուրդ ապաշխարութեան, խոստովանել զյանցանան» իմաստներով [Աւետիքեան և այլք, հ. 1, 968]: Արդի արևելահայերենում բառն առավելապես ընկալվում է իբրև գաղտնիք պահվող որևէ արարքը մեկին հայտնելու, մեկի առջև բացելու, մեղքն ընդունելու իմաստով (մասնավորապես՝ դատարանում):

**\*Ապաշխարել** բառը սույն կանոններում ևս հանդիպում է: Գրաբարում բառը բացատրվում է «զղջալ ի վերայ գործեալ սխալանաց, ցաւել և լալ ի վերայ մեղաց» [Աւետիքեան և այլք, հ.1, 272]: Արդի արևելահայերենում բառը պահպանել է իր սկզբնական իմաստը: Կանոններում հանդիպում են նաև **\*պատարագ** և **\*ընծայ** բառերը, որոնք բացի իրենց հիմնական՝ *նվեր* իմաստից, նշանակել են նաև *կաշառք, տուրք*:

**\*Ընծայ** բառն արդի արևելահայերենում պահպանել է իր սկզբնական իմաստը, մինչևդեռ **\*պատարագ** բառն առավելապես կիրառելի է կրոնական իմաստով՝ նշանակելով հավաքական աղոթք, հոգևոր արարողություն:

**\*Խափանել** - «խափան առնել, խափան լինել, արգելուլ, խոչընդոտ լինել, չթողուլ, կասեցուցանել, անգործ առնել, դադարեցուցանել» [Աւետիքեան և այլք, հ. 1, 936]: Արդի

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

արևելահայերենում բառն իրավաբանական եզրույթաբանության համատեքստում քննարկելիս նշանակում է *չեզոքացնել հանցագործությունը կամ հանցանքը*:

**\*Ազատել** - «ազատ առնել, ապրեցուցանել, զերծուցանել ի ծառայութիւնէ, ի գերութիւնէ», ինչպես նաև «բառնալ ի բաց, փարատել» [Աւետիքեան և այլք, հ. 1, 5-6]: Գրաբարում գործածվելով թե՛ որպես ֆիզիկական ազատության, և թե՛ որպես հոգևոր փրկության կամ բարոյական մաքրագործման միջոց՝ արդի արևելահայերենում բայը հիմնականում կապված է իրավաբանական, վարչական և հասարակական ոլորտների հետ՝ նշանակելով 1. որևէ երկրի կամ ժողովրդի քաղաքական ազատություն տալ, 2. արձակել (բանտից, գերությունից և այլն), 3. ազատագրել, 4. որևէ պարտականությունից՝ պաշտոնից արձակել, 5. վտանգից՝ փորձանքից պրծացնել, 6. վատ հակումներից՝ արարքներից զերծել՝ ետ պահել [Աղայան, հ. 1, 5]:

**\*Հաւատարիմ** - «արժանահաւատ, իրաւամբք և յապահովի հաւատալի, վստահելի, ընդունելի» [Աւետիքեան և այլք, հ. 2, 77]: Սույն կանոններում, կարծում ենք, որ բառը ստացել է *անմեղ* իմաստը՝ հաշվի առնելով դրա գործածության առանձնահատկությունը՝ *«եթե ընկերք իւր և աշակերտք մեղս ի վերայ դնեն երիցուն, և ինքեանք հաւատարիմ են, երեցն առաջի սեղանոյն կացցէ և ամբաստանողքն առաջի ժողովրդեանն, ի բեմէն ի վայր առցեն և ի շինոյն արտաքս հանցեն»*: Բնօրինակից բերված նախադասությունում հանդիպող **\*ամբաստանող (ամբաստանել)** բառը նշանակում է հանդիմանող, բողոք հայտնող, չարախոսող: Այսօր **\*ամբաստանել** բառը հիմնականում գործածվում է իրավական դաշտում, հատկապես՝ դատական պրակտիկայում՝ նշանակելով՝ 1. դատարանում մեկի վրա որևէ հանցանք բարդել, 2. մեկին հանցանք վերագրել, 3. հանցակցության մեջ մեկին մեղադրել [Աղայան, հ. 1, 30]:

**\*Կատարել** - «ի կատար հասուցանել, աւարտել, վճարել» [Աւետիքեան և այլք, հ. 1, 1062]: Արդի արևելահայերենում բայը նշանակում է՝ «1. սկսած բանը մինչև ծայրը հասցնել, 2. մեկի կեանքին վերջ տալ, 3. իրագործել, 4. որևէ գործ անել» [Մալխասյանց, հ. 2, 398]:

Վաչագան Բարեպաշտի կանոնների բնագրից քաղել ենք նաև իրավաբանական դաշտին պատկանող 10 դարձվածք, որոնց իմաստները բացատրել ենք ըստ Ռուբեն Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարան»-ի: Ըստ այդմ՝ առանձնացրել ենք հետևյալ դարձվածքները՝ **ի բաց առնել**-հեռացնել, դէն զցել [Ղազարյան, 109], **կին առնել կամ առնուլ**-ամուսնանալ [Ղազարյան, 164], **ժողով առնել**-հավաքել, մի տեղ բերել [Ղազարյան, 107], **բարի առնել**-բարիք՝ բարերարություն անել [Ղազարյան, 53], **բամբասանս դնել**-բամբասել [Ղազարյան, 51], **մեղ դնել**-մեղադրել, դատապարտել [Ղազարյան, 196], **մահ ի վերայ դնել**-մահապատժի ենթարկել, սպանել [Ղազարյան, 193], **պատուհասս դնել**-պատժել [Ղազարյան, 242], **պատուհասս առնել**-պատժի ենթարկել [Ղազարյան, 242], **մատանի դնել ի վերայ**-մատանիով կնքել [Ղազարյան, 194], **հրաման առնուլ**-հրաման՝ թույլտվություն ստանալ [Ղազարյան, 181]:

Կանոններում կան նաև դարձվածային արժեք ունեցող հարադրություններ, որոնք վկայված չեն վերոնշյալ բառարանում: Դրանց իմաստը փորձել ենք բացատրել՝ ելնելով կանոնների բովանդակությունից: Առանձնացրել ենք այդպիսի 10 հարադրություն՝ **քինու լինել**-վրեժով լցված լինել, **արիւն հեղել** (հոմանիշ է *արիւն թափել* դարձվածքին)-սպանություն գործել, **ի բաց հալածել**-դուրս քշել, **վնաս գործել**-հանցանք

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

գործել, **տրտունջ լինել**-գանգատվել, **արտաքս հանել**-արտաքսել, **վտանգ լինել**-վնաս պատճառել, **գայթանք առնել**-վնաս հասցնել, **յայտ լինել**-հաստատվել, **ապաշխարություն դնել**-որպես տույժ՝ սահմանել ապաշխարություն:

Այսպիսով, իրավական եզրույթները գրաբարի եզրույթային համակարգում առանձնապես կարևոր տեղ են զբաղեցնում՝ արտացոլելով միջնադարյան իրավակարգի, հասարակական հարաբերությունների և կառավարման ձևերի առանձնահատկությունները: «Սահմանադրություն կանոնական»-ի իրավաբանական բառապաշարը ոչ միայն պատմամշակութային արժեք է, այլև կիրառական նշանակություն ունեցող պաշար՝ արդի իրավաբանական լեզվի ինքնատիպ և կենսունակ զարգացման համատեքստում: Մեր կողմից ուսումնասիրված 34 իրավական եզրույթներից արդի արևելահայերենում պահպանվել և գործածվում են 28-ը: Որոշ եզրույթներ ստացել են նոր իմաստային երանգներ, իսկ մյուսները դուրս են մնացել հաղորդակցական գործընթացից, քանի որ դրանց համապատասխան իրավական համակարգերը կամ իրավական հասկացությունները ժամանակի ընթացքում կորցրել են իրենց գործնական նշանակությունը: Միաժամանակ, մեր կողմից ուսումնասիրված եզրույթներից 13-ը, ինչպես՝ կանոնական, ատեան, հրաման, երդումն, պայմանել և այլն, արժեք ունեն թե՛ կրոնական, թե՛ իրավական իմաստային դաշտերում:

Այսպիսով, գրաբարյան իրավաբանական եզրույթների ներկայությունը արդի արևելահայերենում ոչ միայն լեզվական շարունակականության, այլև իրավամշակութային ժառանգության պահպանման վկայությունն է:

### *Գրականության ցանկ*

1. Ակինեան Ն., Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) և իր պատմութիւն Աղուանից, Վիեննա, Միխիթարեան տպարան, 1970, 139 էջ:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 1976, Հատոր 1, 932 էջ, Հատոր 2, 1615 էջ:
3. Աճառյան Հ., Հայերէն արմատական բառարան, Եր., 1926, Հատոր 4, 708 էջ:
4. Կանոնագիրք հայոց, Աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Հատոր Բ, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1971, 595 էջ:
5. Հայր Աւետիքեան Գ., Հայր Սիրմէլեան Խ., Հայր Աւգերեան Ս., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1836-1837 թթ., Հատոր 1, 1142 էջ, Հատոր 2, 1200 էջ:
6. Հովհաննիսյան Ս. Հ., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, Պատմաբանասիրական հանդես, 1967, հ. 4, 274 էջ:
7. Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2012, 280 էջ:
8. Մալխասյանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Երևան, ՍՍՌ Պետական Հրատարակչություն, 1944-1945 թթ., Հատոր 1, 609 էջ, Հատոր 2, 514 էջ, Հատոր 3, 616 էջ, Հատոր 4, 648 էջ:
9. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան: Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2010, 820 էջ:

10. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, 1242 էջ:

**LEGAL TERMINOLOGY IN VACHAGAN THE PIOUS'S “CANONICAL  
CONSTITUTION”**

*Varduhi Barseghyan*

*PhD Student*

*YSU, Faculty of Armenian Philology*

[varduhi.barseghyan@ysu.am](mailto:varduhi.barseghyan@ysu.am)

***Abstract***

Medieval legal literature not only reflects the legal thought of its time but has also played a significant role in the formation of terms that continue to be used in modern legal language. It also serves as a source for the study of legal consciousness, mechanisms of social regulation, and linguistic-cultural heritage, and is therefore regarded today not only within the framework of legal research but also in linguistic and historical-cultural studies. In this respect, Vachagan the Pious's “Canonical Constitution” is a valuable testimony to the linguistic systematization and professional formulation within medieval Armenian jurisprudence. This document reflects the legal regulations and church-society relations of its time, wherein the employed terminology and structural approaches testify to the crucial processes involved in the formation of the internal system of legal language. The terms employed in the canons, with their semantic precision, depth of meaning, and linguistic integrity-are of interest not merely from a historical perspective but can also be viewed as reference points in the development of the professional language of Modern Eastern Armenian, particularly in the evolution of legal terminology. The study of these canons demonstrates that medieval Armenian legal literature embodies a rich and structured terminological layer, the reinterpretation and adaptation of which may contribute to the refinement of the modern legal language, minimizing excessive reliance on foreign borrowings.

***Keywords:*** Vachagan III the Pious, Classical Armenian (Grabar), Legal word units, constitution, rules, semantics.

Ներկայացվել է՝ 10.10.2025թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 21.11.2025թ.